



### 90. ԻՐԵՔ ԿՆԿԱ ՀԵՔԻԱԹ

Աստված ձրգի բարին տա, փորձ ու փորձանքեն աղատե, խղճաք չըմեն ընոնց, օր մեծ դարդ ու խասավաթ ին քաշի մըջ ախշըրին:

Կէղնի-շէղնի, տղե մե կէղնի, անուն Բղղո կէղնի, հեր ու մեր կը մեռնին՝ կը մնա մինակ, դրկեցնեեր կը խղճան ըդոր, դելնան դեղեն աղջիկ մե գուգին բերին, կարգին զտղին, կըսին.

— Իդա լե քրգի կնիկ, գնա քու իդարեն էրե:

Ժամանակ մե գընցնա, իդա կնիկ տղին օր ու արև չի տա, աջ կը խեթե, ձախ կը խեթե, ձեն կը թալե գլուխ, հալըուքի Բղղոն ուրին շիճկե, խըլղի կնկտոց կիշկե, ուր միտք ծուռ է:

— Կնի՛կ,— կըսե Բղղոն,— կը տեսնաս՝ գործ ու բանից աչք չըմ բանա, դու չորի՞ն սուտ կըսիս, քու միտքն ի՞նչ է:

— Հը՞,— կը ճվա ու կը բվա կնիկ,— ես նահախ չըմ խոսա, զքրգի կը խալտառակիմ մըջ գեղին, թորկիմ էրթամ, գնա, ինչքան կոնաս՝ քու չերես սեցու:

— Տո՛ կնիկ, ձենդի կտրե, ես էդ թաուր մարգ չիմ, ամոթ է:

Կնիկ խամի գինաք, ասու իրան օր ուրուտութ կը բանձըրցու, զգլուխ կը ծեծե, քրվե ու կը նալըթի մարդուն: Բղղո ճար կը կտրվի, օրերուց օր մե՝ գելնա կէրթա սար, կը նստի ծառի մե տակ, գընկնա մըջ մառախին, հեռսից գիլա, ուր բախտ կանիծե, մեկ լե՝ շեն մը կը լսե, կիշկե՝ հանդե վըր ծառին հավք մե թառուկ, հավք լեզու կանե, կըսե.

— Բղղո՛, տնավե՛ր, գու չորի՞ն հմալ կոտորվեր իս:

— Իմալ էնիմ, ըշտե հմլա-հմլա բան:

— Քու կնիկ,— կըսե հավք,— ֆուտոնա կը բանցու, կը բոռ-բոռա ու կը տոտոա, գուղե զուր մեղք թալե վըր քըղի, օր ուր կեղտ ծածկե: Քու կնիկ բողբոսն կէնե, դու ի՛մալ շայիշ շըս էնի:

— Յա՛,— կը դարմանա մարդ:

— Ըպա՛,— կըսե հավք,— գուզի՛ս փորձե զընի, օր մե ըսե, թե կէրթաս ֆլան գեղ, չիրկուն շըս չիգա, հմա շըս էրթա, կը պալտը-վիս ալրի փեթկի յետե, քու աչքով կը տեսնաս, քու անկըջով կը լսիս, օր մարդ մե, իմալ օր աղվես ուրին կը թալե հավաբուն՝ գիկա կնկադ հետ խոշուրեշ կէնե, զուր յերես կը սեցու, թորկե կէրթա:

Բղդոն դառնա գիկա տուն, կնկան կըսե՝ թե ֆլան գեղ կէրթա, գիշեր կը մնա չոնի, հմա կէրթա կը պալտըվի ալրի փեթկի յետե, դձեն կը թալե փոր: Վախտ մե գընցնա, չիրկուն օր կէղնի, կը տես-նա հանդե բարակ մողողիկ մարդ մե ներս մտալ, կնկա հետ խոշու-րեշ էրեց, զուր յերես սեցուց, թողեց գնաց:

Բղդոն կէրթա մըտ հավք:

— Վոյա, իմալ կըսեր, հմալ է. իմ աչքով տեսա, իմ չանկըջով լսի, մկա իմա՛լ էնիմ:

— Կնիկ, օր հեղ մե ծուռ քելեց՝ շուրի վեռջ ծուռ կը քելե: Իդամլա կնկան շըն պա՛հի, յոռուն կիտան, դուս կէնի:

Բղդոն կը դառնա գիկա, ուր տեսած ու լսած գուզե իսպաթ էնե վըր կնկան, քոռախադի շհադ չկա, կնիկն ինքար կենե՝ չէ օր չէ, ըդի քու աչքին էրեցեր է, քու գլխեն կը հանիս. գիլս, զգլուխ կը ծեծե, կը ճվա ու կը բվա, կը բոռա ու խոռ, իմալ օր կատողուկ դել: Բղդո, դու Բղդո, քու ձեռներուն մեռնիմ, կը քաշե գկանաչ վարոց, գընկնա կնկա ջան, հմա՛լ կը կակղցու, իմալ գզուկ բամբակ ու բուրդ, զծամերուց կը բռնե, լանդե մե կը զարկե մեշքին, տնեն կէնե դուս:

Ժամանակ մե գընցնա, Բղդոն ուրիշ կնիկ մե կառնե, օղորդ է, ըդի չառջվա կնկա պես չէ, հմա պըզտըկուց ուր ձեռք վատ է սոր-վըցուցի, վիր տուն կէրթա՝ բան մե կը թոցու բերե: Ըսել է՝ ըդի լե-դող է:

— Կնիկ,— կըսե Բղդոն,— հմալ բան մ՛էնի, ամո՛թ է, կը խայտառակվինք մըջ գեղին:

— Ես օր օրեկան բան մե չավելցում տան վրեն, չը՛մ կոնա սթրի:

Մարդ կը խրատե, թքե, մրե, չարա չէղնի: Կնիկ չըմնօր էս դրկեցից, էն դրկեցից բան մե կը թոցու, բերե տուն: Դրկեցնեք գիմ-

նան, գիկան վրր մարդ ու կնկան կռիվ, կը թքին, մրին, թողնին կէրթան: Օր մը լե ժամուց զհաղորդաման կը դնե ծոց, տերտեր գիմնա, կանիծե, գելնա կէրթա մըտ ոես գանգատ: Ռես կանչել կիտա զկնիկ, քու ըսածին կը ծեծե, կը ճապմե: Է՛, գող ու գողութենի սորվուկ ձեռք, էլման գողութեն կէնե, Բղդոն կը տեսնա խաղք է էղի դաթի, կըսե:

— Մենք խայտառակ ինք էղի մըջ ախշըրին, չելի էրթանք ուրիշ էրկիր մե, չոնի սըթըրվորինք, բալքի դու լե ձեռք քաշիս քու սովորութեն:

Խուլասա՛ գելնան գընկնան ճամպա: Շատ կէրթան, քիշ կէրթան՝ կը հասնին էրկիր մե: Էդ էրկիր Աճմու շահ-թագավորի էրկիր կէղնի: Կը հասնին քաղաք մե, պառվում՝ խոնախ կէղնին: Պառավ իմալ օր ուր զավկընեը՝ կը պահե-շահե, գիշեր մե, եբ Բղդոն խորունդ քնուկ կէղնի, պառավ կը տեսնա, օր խոնախ կնիկն չելավ, չուշիկ մե տան պատից զխալին չիշուց, վառգ-վառգ ծալեց, դրեց մըջ տոպըրկին ու դըռ մութուլուս շէղած՝ ձեն տվեց մարդուն:

— Յե՛լի շուտ մե էրթանք:

Մարդ քնուց կը թոնա գելնա, կը տեսնա, օր դըռ մութուլուս է, կնիկ չորի՛ն ուրին քնուց հանեց, իգա տեղ բան մե կա, կիշկե կնկան, կիշկե պառվում, կը տեսնա հանգե պառավ ձեռն չերեսին՝ գիլա ու զգլուխ կը տանե ըբրե:

— Մա՛մո, խորբան, չորի՛ն գիլաս:

— Ի՛մալ չիլամ, լա՛ո, — կըսե պառավ, — թըղ չուղեր՝ ես ուրին փեշքեշ կէնենք:

Բղդոն շայիշ կէնե, ուր կնիկ էլման գողութեն է էրի, կը հասնի, զտոպըրկի բերան կը բանա, կը տեսնա՝ մըջ տոպըրկին խալի մե ծալուկ, դրուկ. կը բռնե կնկա ծամերուց, հմա սատանա կնիկ կը փսթա, փախնի դուս:

— Ընձի սպանի՛ն, ընձի մորթի՛ն, հասե՛ք:

Ձենի վրեն՝ մարդիկ գիկան կը թափին պառվու տուն, դրանի՛ լութեն կը հասկնան, կնկան կիտան ֆըրաշի մե ձեռք՝ տանե բռնատուն: Դու մ՛ըսի՛ Աճմու շահ-թագավորի էրկրի մեշ ադաթ է, օր ո՛ն ինչ ձեռքով գողնա՝ զէն ձեռք կը կտրին: Աջ գողնա՝ զաջ կը կտրին, ձախ գողնա՝ ձախ կը կտրին: Ձկնկան կը տանին, աջ ձեռք կը դնին վրր փետե կոճին ու ա՛ո հա քզի՛ կացնով կը կտրին, կնիկ կսկծուց կը մեռնի: Բղդոն զկնկան կը թաղե, դառնա գիկա ուր տուն:

Բղդոն թըղ մնա ուր տուն, մենք դառնանք հավքուն: Հավքն օրերով ըաքլա կէնե, մարդ շէրևա, չըմքի կամչնա, ընոր չերե:

Ինչնա: Հավք էլ սարք չէնե, կը թոնա գիկա նստի վըր Բղդո ցվքին,  
Շեն կիտա:

— Բղդո՞, յո՞ւր իս, չէրևաս:

Բղդոն՝ ամոթու, դուրսնի դետին՝ կը մոտենա հավքուն, կըսե.

— Հավք բարեկամ, ըշտե հմլա-հմլա բան:

— Ըսկի դարդ մ'էնի,— կըսե հավք,— գողու վեռչ յա՛ բոնա-  
տուն է, յա՛ մեռնել: Գնա՛ քըղի թաժա կնիկ մե գտի, քու իդարեն  
էրե:

Բղդո աչք վախեցեր է: Ի՛մալ էնե, ի՛մալ չէնե, վեռչ կէրթա  
թաժա կնիկ մե կանե: Գու կնիկ մըսի, ասու կրակ, հմալ անզգամ,  
հմալ անսպեո, օր սատանեք կը փախնին ուրնե: Առավոտուց շուրի  
յիրկուն՝ կը ճչա ու կը ճվա, կը բոռա ու կը խոա, լեզուն ըսկի չը  
կա՛նի, հմալ, օր մարդ կը խեխենա: Մարդուն մոտտալ խոսքեր  
կըսե, փետով կը զարկե, կը բոռա հմալ, օր կըսիս մկա տա՛ք քառիք  
պտի բլի:

Բեբախտ Բղդոն ուրին-ուրին կըսե.

— Աստված գերես դառցուցեր է ընձնե, գյա՛լո, ո՞ն է անիծի-  
ընձի:

Սիրտնի կոտոր, աչքնի պղտոր, հմալ մթնուկ՝ իմալ նեմոռեթա  
սար, գեինա կէրթա մըտ հավք:

— Ի՞նչ կա,— կը հարցու հավք:

— Ի՞նչ պտի էղնի, խո՛րբան, մկա լե անզգամ մե հանպըտի  
ընձի, ո՛չ քուն ունիմ, ո՛չ դադար, ըսե, ի՛մալ էնիմ:

Հավք ձեն չը հանե:

— Յորի՞ն բան մե չըսիս, ճամպե մե ցուցու, ա՛սոռ սիրուն:

Հավք զգլուխ կը տանե-բերե, կըսե.

— Մըջ ախշըրին բողուն ու գողուն կոնաս դնի վըր շիտակ:  
ճամպուն, հմա անզգամին, գուզե կնիկ, գուզե մարդ, մինակ մա՛հ՝  
կոնա չոքըցու, ի՞նչ ըսիմ քըզի, գնա՛, քո ճակտու գիրն է, իմա:  
գրուկ է՝ հմալ պտի էղնի:

Բեբախտ Բղդոն կը դառնա գիկա տուն: Կըսին՝ շուրի ուր կենա:  
վեռչ դավի-դառաբի մեջ կապրի, սորա կը մեռնի, զհոգին կազատե  
անզգամից: Թըղ բարերար աստված զմրզի ազատե իդամլա կնկտոց  
ձեռքեն:

